ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Երևանի «Գլաձոր» Համալսարանի Հակոբ Հակոբյանի անվան միջազգային հարաբերությունների ամբիոնը **2023 թ. մայիսի 30-ին** կազմակերպում է «**Հայաստանը աշխարհաքաղաքական արդի զարգացումների համատեքստում**» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված **Հայաստանի Հանրապետության հիմնադրման 105-րդ ամյակին**: Գիտաժողովին կարող են մասնակցել ինչպես ՀՀ բուհերի ուսանողները, ասպիրանտները, այնպես էլ գիտահետազոտական հաստատությունների փորձագետներն ու գիտնականները: Գիտաժողովը հնարավորություն է ընձեռում ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց գիտական հետազոտությունների արդյունքները, կատարելագործելու գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունները, ինչպես նաև կապեր հաստատելու մասնագիտական տարբեր շրջանակների հետ:

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ թեմատիկ ուղղությունների ձևավորվելու են մասնագիտական 2 բաժանմունքներ՝ **ուսանողական և փորձագիտական**, որտեղ կարող են ներկայացվել զեկուցումներ ըստ մասնագիտական հետևյալ ոլորտների՝ **քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, անվտանգային հետազոտություններ, իրավագիտություն, տնտեսագիտություն, փիլիսոփայություն, արևելագիտություն, պատմագիտություն, սոցիոլոգիա, բանասիրություն և լեզվաբանություն**: Ներկայացվող զեկուցումները պետք է համապատասխանեն հանրապետական գիտաժողովի խորագրին և թեմատիկ նեղ ուղղություններին:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գիտաժողովին կարող են մասնակցել ինչպես նախապես հաստատված զեկուցումների հեղինակները, այնպես էլ տարբեր մասնագիտական բնագավառներում էական ավանդ ունեցող փորձագետներ՝ ներկայացնելով արդի թեմատիկ հիմնախնդիրները: Ներկայացվող հոդվածների և բանավոր զեկուցումների լեզուն **հայերենն է**: Զեկուցումներ կարող են ներկայացվել նաև **համահեղինակությամբ**: **Զեկուցման առավելագույն տևողությունը 15 րոպե է**:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2023 թ. ապրիլի 20**-ը լրացնել **առցանց հայտադիմումը**՝ կից ուղարկելով **զեկույցի սեղմագիրը (200-300 նիշ)** կամ **ամբողջական հոդվածը (2000-3000 նիշ)**: Ստացված դիմում-հայտերն անցնելու են

մասնագիտական դիտարկման փուլ: Արդյունքների վերաբերյալ հայտատուները ծանուցվելու են մինչև **2023 թ. ապրիլի 30**-ը:

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

Գիտաժողովի բոլոր մասնակիցներին տրվելու են **մասնակցության վկայականներ**: Ձեկուցված լավագույն նյութերը գրախոսության փուլը հաղթահարելու պարագայում տպագրվելու են **Երևանի «Գլաձոր» համալսարանի գիտական հոդվածների** ժողովածուում:

Դիմելու համար՝

https://forms.gle/NJkuBLzX4QEzBfuA7

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Անհրաժեշտ հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ միջոցներով՝

Հասցե՝ Գրիգոր Լուսավորչի 7/1

Էլ. փոստ՝ Gladzor@gladzor.am

Հեռախոս՝ (+374 55) 44-77-87 կամ (+374 99) 22-02-27